



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19004

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հուլիսի 23-ի թիվ 168-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/109-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՄՎԵԼ ՌԱԶՄԻԿԻ ԴԱՎԹԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝
խորհուրդ), նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ
Անանյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի
Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սամվել Դավթյանի (արտոնագիր՝ թիվ 467)
(այսուհետ նաև՝ Պատասխանող) կարգապահական պատասխանատվության ենթարկելու
վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Սարգիս Ենգոյանը՝ դիմելով Պալատ հայտնել է, որ ԵԱԴԴ/1970/20/17
քաղաքացիական գործով Դիմողը հանդիսանում է դատավարության մասնակից: Նշված
գործով փաստաբան Սամվել Դավթյանը դատարանին տրամադրել է սուտ տեղեկություն
առ այն, որ նա հերթական նիստի ժամանակ գտնվելու է Վրաստանում բուժում անցնելու
համար՝ ներկայացնելով նաև գնացքի տոմսերը: Այդ սուտ տեղեկատվության նպատակն է
եղել դատական նիստը հետաձգելը: Հաջորդ նիստի ժամանակ Սամվել Դավթյանը
շարունակել է ստել, որ նա եղել է Վրաստանում: Դատավորի կողմից Դավթյանի
անձնագրում սահման հատելու կնիքները չհայտնաբերելուց հետո Դավթյանը ստել է, որ
հատել է սահմանը նույնականացման քարտով, ինչը հնարավոր չէ: Հասկանալով, որ
սուտը բացահայտվել է՝ փաստաբան Սամվել Դավթյանն ընդունել է այն փաստը, որ սուտ

տեղեկություն է տրամադրել և շարունակել է ստել դատական նիստի ժամանակ:

Դիմողի կարծիքով, այս ամենն անընդունելի է և անհարգալից վերաբերմունք է իր և դատական համակարգի հանդեպ, վատնում է Դիմողի և դատարանի ժամանակը և խնդրում է փաստաբան Սամվել Դավթյանին զրկել փաստաբանի արտոնագրից:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 18.02.2019թ. թիվ 43-Ա/ԿԳ-19004 որոշմամբ փաստաբան Սամվել Ռազմիկի Դավթյանի նկատմամբ նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.2.3 ենթակետի, 4.1 և 4.3 կետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 05.12.2017թ. հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին (այսուհետ նաև՝ Նախապատրաստող):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի 11.06.2019թ. նիստին Դիմողը ներկայացել և վերահաստատել է իր դիրքորոշումը, իսկ Խորհրդի 23.07.2019թ. նիստին Դիմողը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին, չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի 11.06.2019թ. և 23.07.2019թ. կայացած նիստերին Պատասխանողը պատշաճ ծանուցված լինելով նիստի ժամանակի և վայրի մասին, չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Նախապատրաստողը 17.04.2019թ. կազմել է եզրակացություն, որը Պալատին է հանձնվել 17.04.2019թ.:

Կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին 19.04.2019թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 11.06.2019թ., ժամը՝ 18:30-ին և 23.07.2019թ., ժամը՝ 19:00-ին Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը. հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապարաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապարաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Թիվ ԵԱԴԴ/1970/20/17 քաղաքացիական գործով Պատասխանող Սամվել Ռազմիկի Դավթյանը դատարանին ներկայացրել է տեղեկատվություն, որ նախորդ նիստին չի կարողացել ներկայանալ, քանի որ գտնվել է Վրաստանում:

- Դատարանի կողմից Պատասխանողի անձնագրում սահման հատելու կնիքները չհայտնաբերելուց հետո Սամվել Ռազմիկի Դավթյանը ասել է, որ հայ-վրացական հատել է սահմանը նույնականացման քարտով:

- Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի դիմումով, թիվ ԵԱԴԴ/1970/20/17 քաղաքացիական գործով դատական նիստի ձայնագրառման կրիչով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Սամվել Ռազմիկի Դավթյանը փաստաբան է հանդիսանում 24.06.2005թ-ից, և 2013-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը), որը Պալատի խորհրդի 17.12.2018թ. թիվ ԿԳ/234-Ա որոշմամբ կարճվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սամվել Ռազմիկի Դավթյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի և 4.1 և 4.3 կետերի պահանջների խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման*

նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Նշված կանոնից հետևում է, որ փաստաբանը մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեության ընթացքում չպետք է կատարի այնպիսի արարք, որը կարող է վնասել փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 4.1. կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Կանոնագրքի 4.3 կետի համաձայն՝ փաստաբանը երբեք չպետք է գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացնի դատարանին:

Կանոնագրքի նշված կետերը կարելի է դիտարկել որպես Կանոնագրքի 2.2.3 ենթակետի մասնավոր դրսևորում, որոնց շրջանակներում փաստաբանը պարտավորվում է հարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ՝ ներառյալ դատավարության ընթացքում բարեխիղճ և կարգապահ վարքագիծ դրսևորելու և դատավարության կանոններին ենթարկվելու պարտականությունը, ինչը ներառում է նաև դատարանին կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացնելու արգելքը:

Փաստաբանի դատավարական պարտականությունները կազմում են նրա իրավական կարգավիճակի կարևոր մասը, քանի որ փաստաբանն ունի կրկնակի առաքելություն՝ մի կողմից պաշտպանել իր վստահորդի շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ մյուս կողմից՝ նպաստել դատարանի կողմից պատշաճ արդարադատության իրականացմանը: Վերջինս կարող է իրացվել, եթե փաստաբանն ըստ պատշաճի պահպանում է դատավարական ընթացակարգի կանոնները, իր վարքագծով նպաստում է դատարանի կողմից գործի արագ և օբյեկտիվ քննությանը: Հետևաբար, փաստաբանը, լինելով իրավապաշտպան և արդարադատության իրականացմանը նպաստող անձ, պետք է ողջամիտ հավասարակշռություն ապահովի իր շահերի, իր վստահորդի շահերի և արդարադատության պատշաճ իրականացման հանրային շահի միջև: Դատարանին կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության ներկայացումը կամ փոխանցումը խոչընդոտում է դատավարության բնականոն և արդյունավետ ընթացքին, սահմանափակում է գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության և այդպիսով պատշաճ արդարադատության իրականացնելու դատարանի հնարավորությունն ու կարողությունը: Նման վարքագիծը

հարիր չէ փաստաբանի հանրային կարգավիճակին և չի նպաստում իր գործունեությամբ փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման ու ամրապնդման փատաբանի պոզիտիվ պարտականության կատարմանը, հարգալից վերաբերմունք չէ դատարանի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ:

Կանոնագրքով սահմանված՝ դատարանում փաստաբանի վարքագծի կանոնները համահունչ են Եվրոպայում գործող չափանիշներին, ինչը վկայում է այն մասին, որ փաստաբանի կարգավիճակի անձնական-մասնագիտական և հասարակական բաղադրիչների ողջամիտ հավասարակշռման պահանջը բխում է միջազգային լավագույն փորձից:

Մասնավորապես, Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնագրքի 4.1-4.3 կետերի համաձայն՝

4.1 փաստաբանը դատարանում... պարտավոր է ենթարկվել դատարանում... գործող վարքագծի կանոններին.

4.2 փաստաբանը պարտավոր է պարզաճ հարգանքով վերաբերվել արդար դատաքննության ընթացակարգի նկատմամբ.

4.3 փաստաբանը պարտավոր է հարգալից և քաղաքավարի վերաբերվել դատարանի նկատմամբ, իր վստահորդի շահերը պաշտպանել պարզարժանորեն և անվախ՝ հաշվի չառնելով սեփական շահերը կամ այն հետևանքները, որոնք կառաջանան իր կամ այլ անձի համար:

4.4 փաստաբանը պարտավոր է ձեռնպահ մնալ դատարանին գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվություն ներկայացնելուց:

Սույն պարագայում Պալատի խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանող Սամվել Ռազմիկի Դավթյանը դատարանին ներկայացրել է տեղեկատվություն, որ նախորդ նիստին չի կարողացել ներկայանալ, քանի որ գտնվել է Վրաստանում, իսկ դատարանի կողմից Պատասխանողի անձնագրում սահման հատելու կնիքները չհայտնաբերելուց հետո Պատասխանողն ասել է, որ հայ-վրացական սահմանը հատել է նույնականացման քարտով:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտով Հայաստանի Հանրապետության որևէ միջպետական սահման հատել հնարավոր չէ, և դրա համար հարկավոր է ունենալ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր, որում առկա կլինի Հայաստանի Հանրապետությունից ելքի թույլտվության կնիքը, որը դրվում է ՀՀ վարչապետին առընթեր ոստիկանության կողմից և միջպետական սահմանը հատելու փաստը հաստատող կնիքը, որը դրվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության պետական սահմանում սահմանային ռեժիմը և պետական սահմանի անցման կետերի ռեժիմը սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության Կառավարության 12.05.2011թ. թիվ 735-Ն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ *պետական սահմանի անցման կետ (ռեժիմային գոտիներ) մուտքը (ելքը),*

բացառությամբ օդանավակայաններում գտնվող անցման կետերի, սահմանապահ զորքերը թույլատրում են՝

1) ֆիզիկական անձանց՝ միջազգայնորեն ճանաչված անձնագրի կամ համապատասխան ճամփորդական փաստաթղթի կամ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս՝ Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականի կամ ապաստանի հայցի, կամ Հայաստանի Հանրապետությունից ելք գործելիս՝ տվյալ երկրի վերադարձի վկայականի, իսկ տրանսպորտային միջոցներին՝ գրանցման վկայագրի կամ ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթղթերի հիման վրա:

Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից դատարանին հայտնաձեռնված տեղեկատվությունը, որ նախորդ դատական նիստին ինքը չի մասնակցել, քանի որ գտնվել է Վրաստանում և հայ-վրացական միջպետական սահմանը հատել է իր նույնականացման քարտով, իրականությանը չի համապատասխանում, որպիսի հանգամանքն արձանագրվել է նաև Պատասխանողի մասնակցությամբ գործը քննող դատարանի կողմից դատական նիստի ընթացքում:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը նման վարքագծով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ՝ խախտելով Կանոնագրքի 4.1 և 4.3 կետի պահանջները, ինչպես նաև՝ դրսևորել է փաստաբանին անհարիր վարքագիծ, չի նպաստել իր գործունեությամբ փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման ու ամրապնդման՝ խախտելով Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջները:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Խորհուրդը, հաշվի առնելով Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Սամվել Ռազմիկի Դավթյանի նկատմամբ պետք է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Պալատի Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Սամվել Ռազմիկի Դավթյանին (արտոնագիր՝ թիվ 467) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.2.3 ենթակետի և 4.1 և 4.3 կետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Սամվել Ռազմիկի Դավթյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 467) կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին հրազենել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Մելանյա Առուստամյան

23 հուլիսի 2019թ.

թիվ ԿԳ/109-Ա

ք. Երևան